ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-18/35» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝
գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան « 02 » օգոստոսի 2018թ.
Ժամը՝ 16 ⁰⁰

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ս. Բալոյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Է. Ոսկանյան, Ռ. Շահազիզյան Ա. Վարդևանյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Գ. Միրզոյան, Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Հ.Վարդանյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,
1.2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ,
1.3. Հանձնաժողովի նիստը կասեցման վերաբերյալ տեղեկություններ,
1.4. Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի հուլիսի 16-ին, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սույն թվականի հուլիսի 19-ին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի հուլիսի 16-ին, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը սույն թվականի հուլիսի 19-ին ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

4. Հանձնաժողովի նիստը կասեցման վերաբերյալ տեղեկություններ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի դրույթները, հանձնաժողովի նիստը կասեցնել է մինչև սույն թվականի օգոստոսի 2-ը ժամը 16:00-ն:

5. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

5.1. Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա «ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-18/35» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել «Գեոմափիս» ՍՊԸ-ին,
5.2. Հանձնաժողովի քարտուղարին.
Պայմանագրի կնքման նպատակով, «Գեոմափիս» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ս. Բալոյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Է. Ոսկանյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ռ. Շահազիզյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Վարդևանյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Գ. Միրզոյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Հ.Վարդանյան